

Եզրակացություն-տեղեկանք

ՀՀ Լոռվա մարզի Թումանյան տարածաշրջանի տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցող գրունտների վերաբերյալ

1. Հետազոտվող տարածքն տեղակայված է Լոռվա մարզի կենտրոնական մասում, ընդգրկում է Թումանյան վարչական և հարակից տարածքները:

2. Շրջանը ունի բարեխառն, տաք ամառներով և մեղմ ձմեռներով կլիմա.

Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 370C

Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -240C

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 593 մմ, գերակշռում են 2.0 մ/վրկ արագության, հյուսիսային և հարավային ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 24 մ/վրկ ուժգնության քամիներ:

Ձյան ծածկոցի հաստությունը հասնում է 60 սմ, ճնշումը՝ 70 կգու/մ2

Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 42 սմ:

Տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով կատարվել հետևյալ աշխատանքները՝

- Նախկինում, տվյալ և հարակից տարածքներում տարբեր նախագծա-հետազոտական, գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտական աշխատանքների հաշվետու նյութերի հավաքում, վերլուծություն և ընդհանրացում

- Հետազոտվող տարածքի մանրամասն ինժեներաերկրաբանական տեղագնում:

3. Համաձայն ֆոնդային նյութերի տվյալների հետազոտվող տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները վերևից ներքև՝

Շերտ թիվ - 1 Հողաբուսական ծածկույթ ավազակավային կազմի, հազվադեպ խճի և մանրախճի պարունակությամբ, մինչև 10%, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.2-0.4 մետր

Շերտ թիվ - 2 Ավազակավ շագանակագույն, գորշավուն երանգով, պինդ թանձրության, խճի և մանրախճի պարունակությամբ մինչև 20%, խճա-

մանրախճային գրունտների ենթաշերտերով, սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.6-0.8 մետր:

Չորրորդականի էլուվիալ առաջացումներ

Շերտ թիվ - 3 Խճա-մանրախճային գրունտ, մեծաբեկորներով հրաբխա-նստվածքային ապարներից, ավազային լցանյութով մինչև 30%, ավազի ենթաշերտերով, գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 2.0-2.5 մետր:

Չորրորդականի էլուվիալ առաջացումներ

Շերտ թիվ – 4 Տուֆորեկչիա, պորֆիրիտ խայտաբղետ գույնի, ճեղքավորված, քայքայված, հողմնահատված մեծաբեկորային, միջին ամրության, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը կազմում է 5.0 մետր:

Նեոգեն Չորրորդականի հրաբխա-նստվածքային առաջացումներ

4. Ստորգետնյա ջրերը համաձայն ֆոնդային նիւթերի տվյալների տեղադրված են 5.0 մետրից խորը:

5. Համաձայն կատարված աշխատանքների տվյալների տեղամասի երկրաբանա լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- հողա-բուսական ծածկույթ շերտ թիվ - 1
- կավային գրունտներ շերտ թիվ - 2
- խոշորաբեկորային գրունտներ շերտ թիվ - 3
- կիսաժայռային և ժայռային գրունտներ շերտ թիվ – 4

Ստորև՝ աղյուսակում տրվում է տեղամասի գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները, ըստ նախկինում կատարված լաբորատոր փորձարկումների տվյալների, ըստ հրատարակված գրականության և գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների՝

Հ/Հ	Գրունտի հատկանիշի (ցուցանիշի) անվանումը	Գրունտի անվանումը և շերտի համարը				
		Հողա-բուսական	Խրվածակ	Խճամանրախճա- յին գրունտ	Տուֆորրեկչիա, պորֆիրիտ	
		1	2	3	4	
1.	Խտությունը, գ/սմ ³ նտ Տուֆորրեկչիա, պորֆիրիտ	1.65	1.80	1.90	2.4	
2.	Ներքին շփման անկյունը, աստիճան	-	20	38	-	
3.	Տեսակարար շաղկապվածությունը, Կ Պա	-	23	1	-	
4.	Ձևախախտման մոդուլը, Մ Պա	-	15	34	-	
5.	Պայմանական հաշվարկային ճնշումը, Մ Պա	-	0.2	0.35	0.45	
6.	Գրունտի մշակման պարագրաֆը, ՇՆ և Կ IV-2-82 ,	աղյ. 1-1	9 ⁴ (III)	33 ⁹ (III)	12(V)	-
		աղյ. 3-1	-	-	-	20 ⁴ (VII)
7.	Գրունտի կարգը ըստ նրա սեյսմիկ հատկանիշների, ՀՀՇՆ-II-6.02-2006	III	II	II	II	

Ինժեներ-երկրաբան

Վ. Թ. Գինոյան